

02
ԱՊՐԻԼԻ
2020



ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	1
2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ	2
2.1. Եվրոպական միության իրավասու մարմինների դիրքորոշումները.....	3
2.2. Առանձին երկրների կողմից համաճարակի դեմ պայքարի համատեքստում իրականացված միջոցառումներ	5
3. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	8

1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ազգային ժողովը 2020թ. մարտի 30-ին առաջին ընթերցմամբ ընդունեց Կառավարության կողմից ներկայացված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց միջոցով նախատեսվում է համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակումներ: 2020թ. մարտի 31-ին նախագծերի երկրորդ ընթերցումը տապալվեց քվեարկության ժամանակ անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու պատճառով: Այնուամենայնիվ, նույն օրը՝ 2020թ. մարտի 31-ին, ժամը 17:00-ին Կառավարության նախաձեռնությամբ կրկին հրավիրվեց Ազգային ժողովի արտահերթ նիստ և ուշ երեկոյան Ազգային ժողովի իշխող խմբակցությունը առանց խորհրդարանական ընդդիմության մասնակցության կարողացավ ապահովել անհրաժեշտ թվով ձայներ, և նույն նախագծերը ընդունվեցին երկու ընթերցմամբ (այսուհետ՝ Օրենք¹):

Ըստ Օրենքի՝ պետական մարմինները և պետության կողմից հիմնադրված իրավաբանական անձինք էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորներից (**Բիլայն, Յուրոմ, Վիվա-ՄՏՍ**) կարող են ստանալ տեղեկատվություն՝ վերջիններիս հաճախորդների գտնվելու վայրի (հաճախորդի տեղորոշում), հաճախորդի հեռախոսահամարի հետ կապ ունեցած հեռախոսահամարների, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթվի և դրանց սկզբի վերաբերյալ: Նախատեսվում է նաև անձանց, որոնց նկատմամբ կիրառված է ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներ, պարտավորեցնել օգտագործելու Կառավարության կողմից սահմանված էլեկտրոնային հաղորդակցության և ծրագրային ապահովման միջոցներ (հեռախոսային հավելվածներ):

Նախագծերի առանձին դրույթների թերությունների վերաբերյալ իրենց մտահոգություններն են հայտնել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը², ինչպես նաև մի շարք իրավապաշտպաններ, որոնց կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները մեր կողմից ամբողջությամբ ընդունելի են: Ուստի, ստորև կներկայացնենք նոր տիպի կորոնավիրուսի համաճարակի (այսուհետ՝

¹ Օրենքը հասանելի է հետյալ հղումով՝ http://parliament.am/draftreading_docs7/K-544_DR2.pdf:

² Մարդու իրավունքների պաշտպանի իրավական դիրքորոշումները՝ հաղորդակցության գաղտնիության և մյուս իրավունքները սահմանափակող օրենքների նախագծերի վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1137>:

Համաճարակ) արդյունքում տարբեր երկրներում կիրառվող համանման իրավունքների սահմանափակումների փորձը և դրա հիման վրա՝ եզրահանգումներ Հայաստանի համար:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Համաճարակի տարածման կանխարգելման նպատակով անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանափակումներ նախատեսվել են նաև մի շարք այլ երկրներում: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ ասիական երկրներում մարդու հիմնական իրավունքների, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակումները և միջամտությունը շատ ավելի ինտենսիվ է: Սակայն Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետության համար, որը վավերացրել է մարդու հիմնական իրավունքները երաշխավորող մի շարք միջազգային փաստաթղթեր, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիան, առաջնային են եվրոպական երկրների փորձը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների կողմից արտահայտված դիրքորոշումները:

Հարկ է ընդգծել, որ չնայած Համաճարակի դեմ պայքարը կարող է իրավաչափ դարձնել մարդու հիմնական իրավունքներին միջամտության նպատակը՝ այդ միջամտությունը պետք է բավարարի ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պահանջներին, այն է՝ ընտրված միջոցի՝

- 1) համաչափություն (Սահմանադրության 78-րդ հոդված)
 - պիտանիություն
 - անհրաժեշտություն
 - համարժեքություն,
- 2) Սահմանադրության 80-րդ հոդվածով նախատեսված իրավունքի էության անխախտելիություն,
- 3) որոշակիության սկզբունք (Սահմանադրության 79-րդ հոդված):

Նշված պահանջներին չհամապատասխանող միջոցների կիրառման պարագայում անձը իրավասու է լինելու դիմել դատական պաշտպանության միջոցին, այդ թվում՝ նաև ՀՀ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների (մասնավորապես՝ ՄԻԵԴ):

2.1. Եվրոպական միության իրավասու մարմինների դիրքորոշումները

Տվյալների պաշտպանության եվրոպական խորհուրդը (EDPB) անկախ եվրոպական մարմին է, որի նպատակն է հետևել ԵՄ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի հետևողական կիրառմանը: 2020թ. մարտի 19-ին նշված խորհուրդը հանդես է եկել «Covid-19 համաճարակի համատեքստում անձնական տվյալների մշակման վերաբերյալ» հայտարարությամբ³: Հայտարարության մեջ, մասնավորապես նշվում է.

- ԵՄ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգը (այսուհետ՝ GDPR) նախատեսում է իրավական հիմքեր, որպեսզի իրավասու հանրային առողջապահական մարմինները կարողանան օգտագործել անձնական տվյալները Համաճարակի համատեքստում՝ առանց տվյալների սուբյեկտի համաձայնության ստացման (հոդ. 6 և 9)⁴: Սակայն, անհատական տվյալների մշակման կանոնները, այնուամենայնիվ, պետք է պահպանվեն:
- EPrivacy դիրեկտիվի⁵ կենսագործումն ապահովող ազգային օրենքները ելնում են այն սկզբունքից, որ գտնվելու վայրի մասին տվյալները կարող են օգտագործվել օպերատորի կողմից միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են *անանուն կամ առանձին անձանց համաձայնությամբ*:
- Երբ հնարավոր չէ մշակել միայն անանուն տվյալներ, ePrivacy դիրեկտիվի 15-րդ հոդվածը թույլ է տալիս անդամ պետություններին օրենսդրական միջոցներ ձեռնարկել ազգային և հասարակական անվտանգության ապահովման համար: Նման դեպքերում անդամ պետությունը պարտավոր է ապահովել պատշաճ երաշխիքներ, ինչպիսին է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվող անձանց դատական պաշտպանության իրավունքի տրամադրումը:
- Համաչափության սկզբունքը նույնպես պետք է կիրառվի: Անձանց «հետևելը» կարող է համարվել համաչափ՝ բացառիկ հանգամանքներում և կախված մշակման կոնկրետ պայմաններից: Այն պետք է ենթարկվի ուժեղացված հսկողության՝ տվյալների պաշտպանության սկզբունքների

³ Statement on the processing of personal data in the context of the COVID-19 outbreak. Adopted on 19 March 2020

(https://edpb.europa.eu/sites/edpb/files/files/file1/edpb_statement_2020_processingpersonaldataandcovid-19_en.pdf)

⁴ Regulation (EU) 2016/679 (General Data Protection Regulation) in the current version of the OJ L 119, 04.05.2016; cor. OJ L 127, 23.5.2018 (<https://gdpr-info.eu/>)

⁵ Directive 2002/58/EC of the European Parliament and of the Council of 12 July 2002 concerning the processing of personal data and the protection of privacy in the electronic communications sector (Directive on privacy and electronic communications), (<http://data.europa.eu/eli/dir/2002/58/oj>):

պահպանումը ապահովելու համար (կիրառված միջոցի համաչափությունը տևողության և ծավալի տեսանկյունից, տվյալների սահմանափակ պահպանումը և սահմանափակման նպատակը):

2020թ. մարտի 30-ին «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի⁶ հիման վրա ստեղծված հանձնաժողովի նախագահը և Եվրոպայի խորհրդի անձնական տվյալների պաշտպանության գործերով հանձնակատարը հանդես են եկել «Covid-19 համաճարակի համատեքստում անձնական տվյալների պաշտպանության» վերաբերյալ համատեղ հայտարարությամբ⁷, որտեղ կատարվել են նաև Հայաստանի համար չափազանց կարևոր դիտարկումներ.

- Անհրաժեշտ է, որպեսզի *ներկայացվեն երաշխիքներ առ այն, որ ապահովվելու է անձնական տվյալների ամբողջական պաշտպանությունը արտակարգ դրության ավարտից հետո*: Դա ենթադրում է «տվյալների բնականոն վերամշակման» ռեժիմին վերադառնալու հստակ գործիքակազմի և ընթացակարգերի առկայություն՝ մեծ ուշադրություն դարձնելով մարդկանց առողջական վիճակի վերաբերյալ և/կամ այլ հատուկ կարգի տեղեկատվությանը և/կամ արտակարգ դրության ընթացքում մարդկանց հետևելու նպատակով գեներացված տեղեկատվությանը:
- Յուրաքանչյուր պետության անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինները պետք է հավուր պատշաճի գնահատական տան պետության կողմից կիրառվող միջոցների վերաբերյալ:
- COVID-19-ի դեմ պայքարի նորարարական լուծումների մշակման գործում առանցքային են վերլուծությունների կամ արհեստական բանականության լուծումների թափանցիկությունը և «բացատրելիությունը», կանխազգուշական մոտեցումը և ռիսկերի կառավարման ռազմավարությունը (ներառյալ՝ անանուն տվյալների դեպքում նույնականացման ռիսկը), տվյալների որակի և դրանք նվազագույնի հասցնելու վրա ուշադրության կենտրոնացումը, ինչպես նաև մարդկանց կողմից վերահսկողությունը:
- Մասնավոր և պետական մարմինները կարող են մշակել մի շարք IT լուծումներ համավարակի դեմ պայքարում: Ինչ վերաբերում է մասշտաբային

⁶ Վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից 01.09.2012թ., ՀՀԱԳՆՊՏ 2012.12.28/14(22):

⁷ Joint Statement on the right to data protection in the context of the COVID-19 pandemic by Alessandra Pierucci, Chair of the Committee of Convention 108 and Jean-Philippe Walter, Data Protection Commissioner of the Council of Europe Strasbourg, 30 March 2020, <https://rm.coe.int/covid19-joint-statement/16809e09f4>:

տեղեկատվության հավաքագրմանը, այն կարող է պետության կողմից կիրառվել միայն այն դեպքում, եթե գիտական վերլուծության համաձայն՝ հասարակության առողջության պաշտպանության համար այլընտրանքային արդյունավետ այլ միջոց չկա:

2.2. Առանձին երկրների կողմից համաճարակի դեմ պայքարի համատեքստում իրականացված միջոցառումներ

- **Ավստրիայի** հեռահաղորդակցության ցանցի առաջատար օպերատոր A1-ը իր հաճախորդների *անանուն տվյալները* փոխանցել է կառավարությանը, որն այդ տվյալների վերլուծությունը օգտագործում է համաճարակի տարածման դեմ պայքարում: Նշված տվյալների վերլուծությունը պետք է ուստիականության կողմից օգտագործվի, որպեսզի կանխվեն, օրինակ՝ հասարակական տարածքներում անձանց կուտակումները⁸:
- **Գերմանական** բջջային կապի օպերատոր Deutsche Telekom-ը իր օգտատերերի տեղաշարժի մասին *անանուն տվյալները* փոխանցել է Ռոբերտ Կոխի ինստիտուտ: Տվյալների փոխանցումը նպատակ ունի մոդելավորել, թե ինչպես են մարդիկ տեղաշարժվում ողջ երկրի և համայնքի մակարդակում: Սակայն, փոխանցված անանուն տվյալներով անհնարին կլինի նույնականացնել անհատ քաղաքացիներին կամ վարակված մարդկանց⁹:
- **Իտալիայի** բջջային ցանցի օպերատոր Vodafone Group Plc-ը իր հայտարարության մեջ նշում է, որ իտալացի պաշտոնյաներին տրամադրում է իր հաճախորդների *անանուն տվյալները*՝ հետևելու և վերլուծելու բնակչության տեղաշարժերը համաճարակից ամենաշատը տուժած Լոմբարդիայի շրջանում, որտեղ մարդիկ մեկուսացված են¹⁰:
- **Բելգիայի** տվյալների պաշտպանության մարմինը հրապարակել է ուղեցույց համավարակի կանխարգելման նպատակով ստեղծված հավելվածների կողմից անձնական տվյալների մշակման թույլատրելիության մասով: Մասնավորապես նշվել է, որ մինչև օգտատերը կփոխանցի իր անձնական տվյալները, հավելվածը պետք է հստակ ներկայացնի ԵՄ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգով նախատեսված տվյալները (տեղեկատվության հսկող¹¹ (data controller), տեղեկատվության մշակման

⁸ <https://www.geospatialworld.net/blogs/eu-member-states-covid-19/>

⁹ <https://frask.de/coronavirus-deutscher-mobilfunkbetreiber-gibt-bewegungsdaten-weiter/>

¹⁰ <https://privacyinternational.org/examples/3428/vodafone-produces-anonymous-heat-map-help-lombardy-understand-population-movements>

¹¹ Տեղեկատվության հսկողը այն սուբյեկտն է, որը որոշում է թե ինչ նպատակով և ինչպես պետք է հավաքել անձնական տվյալը: Հղում՝ https://ec.europa.eu/info/law/law-topic/data-protection/reform/rules-business-and-organisations/obligations/controller-processor/what-data-controller-or-data-processor_en

հստակ նպատակը և այլն): Նշվել է, որ նման հավելվածների օգտագործումը չպետք է *անձը ուղղակիորեն նույնականացնող տեղեկատվություն պահանջի (անուն-ազգանուն, էլ. հասցե, հեռախոսահամար և այլն)*¹²:

- **Մեծ Բրիտանիայի** կառավարությունը բանակցություններ է վարում երկրի առաջատար բջջային օպերատորի սեփականատեր BT Group ընկերության հետ, որպեսզի օգտագործվեն հեռախոսահամարների գտնվելու վայրի տվյալները՝ պարզելու համար, թե արդյո՞ք մարդիկ պահպանում են մեկուսացման պահանջները: Երկրի առաջատար օպերատորները, միաժամանակ, հայտնում են, որ բանակցություններ են վարում կառավարության հետ, որպեսզի գտնեն արդյունավետ միջոց *հեռախոսային տվյալների (տեղորոշման) միջոցով* վարակի տարածումը կանխելու համար: Օպերատորները, միաժամանակ ընդգծում են իրենց հաճախորդների տվյալների պաշտպանվածության կարևորության մասին և առաջարկում են *ստեղծել անանուն քարտեզներ*, որը կօգնի հասկանալու անձանց տեղաշարժը և պայքարելու վարակի տարածման դեմ¹³:
- **Լեհաստանի կառավարությունը** մեկուսացման մեջ գտնվող անձանց համար թողարկել է «Տնային կարանտին» հավելվածը: Նշենք, որ պարտադիր մեկուսացում է սահմանված արտերկրից Լեհաստան վերադարձած քաղաքացիների, ինչպես նաև նոր տիպի կորոնավիրուսով վարակված անձանց հետ շփում ունեցած անձանց համար: Հավելվածը առաջարկվում է ներբեռնել ինքնամեկուսացման վայր մուտք գործելուց հետո: Ինքնամեկուսացման վայրը արձանագրվում է այսպես կոչված տեղորոշման քարտում, որը անձը լրացնում է երկիր մուտք գործելուց անմիջապես հետո: Մեկուսացված անձին հաղորդագրության տեսքով գալիս է սելֆի անելու հրահանգ: Անձը նշված հավելվածի միջոցով անում է սելֆի, որն օգնում է համապատասխան մարմիններին հավաստափանալու, որ անձը պահպանում է մեկուսացման պայմանները և գտնվում է մեկուսացման վայրում: Օրվա ընթացքում հաղորդագրությունը կարող է գալ մեկից ավելի անգամ: Հավելվածի ներբեռնումը պարտադիր չէ: Նկար անելու հրահանգը ստանալուց հետո անձը ունի 20 րոպե ժամանակ, որից հետո ոստիկանությունը կարող է այցելել անձի տուն և ստուգել՝ արդյո՞ք պահպանվում են կարանտինի պայմանները, թե՞ ոչ: Սելֆիի իսկությունը հաստատելու համար պատկան մարմինները այն համեմատում են Լեհաստան մուտք գործելուց անմիջապես հետո արված նկարի հետ: Նշենք, որ հավելվածից կարող են օգտվել միայն մեկուսացման ենթակա անձինք, քանի որ հավելվածը կապակցված է մեկուսացման ենթակա անձանց

¹² <https://www.autoriteprotectiondonnees.be/le-covid-19-et-lutilisation-dapplications-de-sante>

¹³ <https://www.theguardian.com/world/2020/mar/19/plan-phone-location-data-assist-uk-coronavirus-effort>

հեռախոսահամարների բազային և գործարկվում է միայն այն դեպքում, երբ ներբեռնողի հեռախոսահամարը առկա է նշված բազայում: Անձի հեռախոսահամարը ընդգրկվում է վերոհիշյալ բազայում երկիր մուտք գործելուց հետո: Անձնական տվյալների մշակման թույլատրելիության մասով Լեհաստանի Անձնական տվյալների պաշտպանության գրասենյակի նախագահը պաշտոնական հաղորդագրություն է տարածել, որտեղ, մասնավորապես, հղում անելով ԵՄ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի 46-րդ հոդվածին՝ նշվում է, որ անձնական տվյալների մշակումը պետք է թույլատրելի լինի այն դեպքերում, երբ առկա է հանրային շահ, ներառյալ՝ համաճարակների մշտադիտարկումը¹⁴:

- **Սլովակիայի խորհրդարանի** կողմից ընդունվել է օրենք, որը հնարավորություն է տալիս առողջապահության նախարարությանը բջջային հեռախոսի միջոցով հետևել անձանց տեղաշարժին: Իշխանության ներկայացուցիչները նման օրենքի նախագիծը հիմնավորում են՝ մեջբերելով Սինգապուրի, Հարավային Կորեայի և Թայվանի փորձը: Հոդվածում նշվում է, որ իշխանությունները հասարակության կողմից անձնական տվյալների պաշտպանվածության իրավունքի հնարավոր խախտումների վերաբերյալ արտահայտված մտահոգությունների համատեքստում պարզաբանել են, որ հավաքվելու են միայն սահմանափակ տվյալներ, և որ դրանք կարող են օգտագործվել միայն կապված համաճարակի հետ¹⁵:
- **Իսրայելի** կառավարության որոշմամբ երկրի ներքին անվտանգության գործակալությանը լիազորվել է բջջային կապի միջոցով *հետևելու այն անձանց տեղաշարժին, ովքեր վարակվել են նոր տիպի կորոնավիրուսով* կամ ում մոտ կասկածվում է նման վիրուսի առկայության հնարավորությունը: Նման կարգավորմամբ պայմանավորված՝ հասարակության շրջանում առկա մտահոգությունների ֆոնին երկրի վարչապետը հայտարարել է, որ այդ տեղեկությունները օգտագործվելու են ծանուցելու համար այն մարդկանց, ովքեր հնարավոր կոնտակտ են ունեցել վարակված անձանց հետ, ինչպես նաև վերահսկելու համար անձանց մեկուսացումը: Վարչապետը նաև նշել է, որ «կիբեռ» վերահսկողությունը գործելու է 30 օրվա ընթացքում, և այդ գործիքը կօգնի վարակակրի տեղորոշման և համաճարակի տարածումը կանխարգելելու համար¹⁶:
- **Սինգապուրի կառավարության** տեխնոլոգիական գործակալությունը մշակել է հավելված (TraceTogether), որն այն ներբեռնող քաղաքացիներին հնարավորություն է տալիս արագ տեղեկանալ, թե արդյո՞ք կոնտակտ են

¹⁴ <https://www.gov.pl/web/cyfrizacja/aplikacja-kwarantanna-domowa--ruszyl-proces-jej-udostepniania>

¹⁵ <https://www.ft.com/content/64539a44-6e87-11ea-89df-41bea055720b>

¹⁶ <https://www.theguardian.com/world/2020/mar/17/israel-to-track-mobile-phones-of-suspected-coronavirus-cases>:

ունեցել վարակակիր անձի հետ, թե՛ ոչ: Հավելվածը Bluetooth-ի միջոցով նույնականացնում է մոտակա այլ հեռախոսները, որոնցում նույնպես առկա է այդ հավելվածը: Այնուհետև հավելվածը ֆիքսում է այն դեպքերը, երբ սերտ կապ է հաստատվում անձանց միջև, ներառյալ՝ ժամանակահատվածը: Եթե անհրաժեշտություն առաջանա, ապա այս տեղեկատվությունը օգտագործվում է սերտ կապերը պարզելու համար՝ հիմնվելով երկու օգտագործողների միջև շփման հեռավորության և տևողության վրա: Անձնական տվյալների պաշտպանության առումով հավելվածը չի հետևում անձի գտնվելու վայրին և կոնտակտներին: Հավելվածի միջոցով հավաքագրված տվյալները գեներացվում են անձի հեռախոսում 21 օրվա ընթացքում և պետական մարմիններին հասանելի են դառնում միայն վարակարի հետ սերտ շփման դեպքում¹⁷: Հավելվածը ներբեռնելու և որպես վարակակիր ճանաչվելու դեպքում իրավասու պետական պաշտոնյան կարող է անձից պահանջել տրամադրելու հավելվածում առկա գաղտնագրված տեղեկատվությունը: Հավելվածում առկա տեղեկատվության միջոցով առողջապահության նախարարությունը կարողանալու է արագ հայտնաբերել վարակակրի հետ շփված անձանց: Հավելվածի տեղեկատվությունը չտրամադրելու դեպքում անձը կարող է պատասխանատվության ենթարկվել¹⁸:

- **ԱՄՆ կառավարությունը** ակտիվ բանակցություններ է վարում Facebook-ի, Google-ի, այլ տեխնոլոգիական ընկերությունների լայն շրջանակի և առողջապահության ոլորտի փորձագետների հետ այն մասին, թե ինչպես նրանք կարող են օգտագործել ամերիկացիների հեռախոսներից հավաքված տվյալները կորոնավիրուսի դեմ պայքարելու համար, ներառյալ հետևելու համար, թե արդյո՞ք մարդիկ պահպանում են մեկուսացման հրահանգները: Առողջապահության ոլորտի փորձագետները հետաքրքրված են վերոհիշյալ հնարավորությամբ, որ մասնավոր հատվածի ընկերությունները կարող են հավաքագրել **անանուն տվյալներ**, որոնք նրանք կարող են օգտագործել վարակի տարածման քարտեզագրման համար¹⁹:

3. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Համաճարակի դեմ պայքարը կարող է իրավաչափ դարձնել մարդու հիմնական իրավունքներին միջամտությունը, սակայն այդ միջամտությունը

¹⁷ <https://www.gov.sg/article/help-speed-up-contact-tracing-with-tracetoegether/>:

¹⁸ <https://www.straitstimes.com/singapore/coronavirus-singapore-develops-smartphone-app-for-efficient-contact-tracing>, <https://sso.agc.gov.sg/Act/IDA1976#pr57B>- հոդված 57B:

¹⁹ <https://edition.cnn.com/2020/03/18/tech/us-government-location-data-coronavirus/index.html>:

պետք է բավարարի ՀՀ Սահմանադրությամբ սահմանված համաչափության սկզբունքին (հոդված 78):

- Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ երկրի համար, որը վավերացրել է մարդու հիմնական իրավունքները երաշխավորող մի շարք միջազգային փաստաթղթեր, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիան, առաջնային է եվրոպական երկրների փորձը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների կողմից արտահայտված դիրքորոշումները:
- Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներով սահմանված նորմերին չհամապատասխանող միջոցների կիրառման պարագայում անձը իրավասու է լինելու դիմել դատական պաշտպանության միջոցին, այդ թվում՝ նաև ՀՀ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների (մասնավորապես՝ ՄԻԵԴ):
- Տվյալների պաշտպանության եվրոպական խորհուրդը նշել է, որ անձանց «հետևելը, այդ թվում՝ բջջային հեռախոսի միջոցով, կարող է բացառիկ պայմաններում լինել համաչափ: Այդ դեպքում այն պետք է ենթարկվի ուժեղացված հսկողության՝ տվյալների պաշտպանության սկզբունքների պահպանումը ապահովելու համար *(կիրառված միջոցի համաչափությունը՝ տևողության և ծավալի տեսանկյունից, տվյալների սահմանափակ պահպանումը և սահմանափակման նպատակը)*:
- Մասշտաբային տեղեկատվության հավաքագրումը կարող է պետության կողմից կիրառվել *միայն այն դեպքում, եթե գիտական վերլուծության համաձայն՝ հասարակության առողջության պաշտպանության համար այլընտրանքային արդյունավետ այլ միջոց չկա:*
- Մի շարք միջազգային կառույցներ ընգծում են յուրաքանչյուր պետության *անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինների դերը՝* կարևորելով, որ վերջիններս հավուր պատշաճի գնահատական տան պետության կողմից կիրառվող միջոցների վերաբերյալ: Այս առումով, հատուկ մարտահրավեր է նետված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը, որը լինելով նախարարության առանձնացված ստորաբաժանում, խնդիր է ունենալու պաշտպանելու քաղաքացիների անձնական տվյալների ոչ պատշաճ օգտագործումը պետական մարմինների կողմից:
- Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ Համաճարակի կանխարգելման նպատակով բջջային օպերատորների կողմից իրենց հաճախորդների վերաբերյալ փոխանցված տվյալները ապահովում են

տեղեկատվության անանուն լինելը, որի պայմաններում պետությունը չունի որևիցե հնարավորություն անհատներին նույնականացնելու (օրինակ՝ Իտալիա, Ավստրիա, Գերմանիա): Այդ տվյալների մշակումն ուղղված է մարդկանց անորոշ շրջանակի ընդհանուր տեղաշարժին և հանրային վայրերում կուտակումներին հետևելուն:

- Մինչդեռ խնդրո առարկա Օրենքով նախատեսված է, որ իրավասու մարմինները կարող են ստանալ հաճախորդի հեռախոսահամարի հետ կապ ունեցած հեռախոսահամարների, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթվի և սկզբի վերաբերյալ տվյալները: Նշված տվյալների պիտանի և անհրաժեշտ լինելը վարակի կանխարգելման և հնարավոր վարակակիրներին բացահայտելու տեսանկյունից բավարար հիմնավորված չէ:
- Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքներին նմանօրինակ լայնածավալ միջամտությունը, ինչպիսին նախատեսված է Օրենքով, չկա ՄԻԵԿ անդամ ոչ մի այլ երկրում:
- Կարևոր է, որպեսզի ներկայացվեն բավարար երաշխիքներ առ այն, որ ապահովվելու է անձնական տվյալների ամբողջական պաշտպանությունը արտակարգ դրության ավարտից հետո, ինչը բավարար կերպով կարգավորված չէ Օրենքում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: